



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԽԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 30, 1895

ԹԻԻ 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հոգի Չունեցող Մարդ Մը . . . . .	89
Առաւօտեան Եւ Երեկոյեան Աղօթք . . . . .	90
Կրօնական Լուրեր . . . . .	90
Խուրի Եւ Համբեր Կրթելու Բերանացի Դրութիւնը . . . . .	91
Սաստիկ Յուրտին Ազդեցութիւնը Մտքին վրայ . . . . .	92
Նիակարայի Ձրվէժները . . . . .	92
Թղթակցութիւնը . . . . .	—
Կենսադրութիւն Պատ. Սիմոն Գաւթեանի . . . . .	92
Հին Յիշատակներ . . . . .	93
Ազդ . . . . .	94
Հանդէս Քաղաքական . . . . .	95
Դրամական . . . . .	96

ԱԻՅՏԱԲՈՒ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. Կը հրատարակուի ամէն շաբաթ օր:

Տարեկան գինն է ամէն տեղոյ համար կանխիկ 1 1/2 մեծխալիկ, վեցամսեայն՝ 3/4 մեծխալիկ: Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է: Մէկ բերրի գինն է 30 փարսա խմբագրութեան, բաժանորդագրութեան եւ քղաատարութեան պատկանելի ամէն գրութիւնը պարտին ուղղուիլ առ Մր. Հ. Ս. Պարնըմ, Ամերիկացան Խան, Կ. պոլիս:

Ամերիկայի Միտինարաց Ընկերութեան կողմանէ, Ճ. Ք. Կրիւն, ԱՐՏՕՒՍԵՐ Հ. Ս. ՊԱՐՆԸՄ, ՏԵՐԵՆ-ՍՄԲՈՒՐ

ՀՈԳԻ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴ ՄԸ (ՏԻՒՆ Ճ. Ք. Պարնըմ)

Երբ ես ֆալսիֆորնիա կը բնակէի հանքադործական ձեռնարկութեանց սկիզբները, շատ կ'իմ չէր գտնուեր հոն և կեանքը շատ կոշտ էր: Մեծ փափաք ունէի միտինարական գործ կատարելու: Կ'ուզէի հեռի երկիրներ երթալ, բայց միտինարական գործ գտայ բուն իսկ երկրիս մէջ և անկէ ի վեր անգործ չեմ մնացած: Օր մը լսեցի որ հանքադործները մահուան անկողին ինկած մարդու մը վրայ կը խօսէին ամուսնոյս: Կ'ըսէին թէ "սղորմելին երբեք հոգի չունէր": Բնաւ լսած չէի թէ հոգի չունեցող մարդ կը գտնուի. ուստի հարցումներ քրի մահամերձին վրայով, և ընդունեցի ու պատասխանը. "Չկայ ոճիր մը որով աւրատարուած չըլլան անոր ձեռքերը: Հանքադործներն անգամ չեն կրնար անոր քով կենալ: Վայրագ բնաւորութիւն ունի": Բլուրներէ անցայ մինչև որ վերջապէս հասայ այն մարդուն խեղճ

բնակարանը: Դուռը կրնակի վրայ բաց էր: Մարդը պառկած էր յարդի վրայ և գունաւոր սաւաններ փռուած էին գետինը: Երբ իմ շուքս ինկաւ անոր գրան մէջ, նա սարսափելի հայհոյութիւն մը ըրաւ ինծի: Կանգ առի վայրկեան մը: Երբեք լսած չէի այնպիսի հայհոյութիւն: Ըսի, "Բարեկամ, մի՛ հայհոյեր": "Դուն իմ բարեկամս չես," ըսաւ. "Ես երբեք բարեկամ չեմ ունեցած և չեմ ուզեր ունենալ": "Մականջ կը ցաւիմ ես տեսնելով որ հոս պառկած կը տանջուի և հոս պիտի մեռնիս": "Մէկուն հոգը չէ ատ," ըսաւ, "Ես բարեկամ չունիմ": Ուզեցի սրտին դպչիլ. ուստի ըսի, "Մայրդ կը յիշե՞ս": Երբեք պատահած չեմ մէկուն որուն սիրտը չչարժէր այսպիսի խօսքէ մը: Նա հայհոյեց իր մայրը: Աստուծոյ վրայ խօսեցայ: Հայհոյեց զԱստուած: Տէր Յիսուս ֆրիստոսի վրայ խօսեցայ, և տեսայ թէ չէր գիտեր թէ ի՞նչ բանի վրայ կը խօսիմ: Վաթուռն տարիէ ի վեր գործի ելած էր մարդը, քառասուն տարի աշխատած էր Նիւ Եորք քաղաքին մէջ, և ուստի այդպիսի ստուգեան մը չէր կրնար հաւատալ: Իբր երկու շաբաթէն դարձեալ դայի անոր քով, բայց ամէն միջոց անյաջող կ'երևէր: Չգտայ մարդուն սրտին բանալին: Տուն դայի և ես ինծի ըսի, "Չեմ կարծեր թէ նորէն երթալը որ և է օգուտ ունենայ": Պզտիկ մանչերս պառկեցուցի և աղօթելէ ետև բաժնուեցայ անոնցմէ: Սկսայ սապէս մտածել. եթէ պզտիկ մանչերէս մէկը մեծնար և մորբեր, պիտի չուզէի՞ որ կ'իմ մը աշխատէր և հոգ տանէր անոր, և երկու շաբաթ աշխատելէ ետքն անգամ չդադրեցնէր իր ջանքը և աշխատութիւնը: Չկրցայ քնանալ: Կը դգայի թէ այս կամ այն պատճառաւ չէի կրնար շարժել մարդուն սիրտը: Գացի աղօթեցի Աստուծոյ: Սորվեցայ, ինչ որ առաջ չէի սորված, թէ ի՞նչ բան է աշխատիլ մարդկային հոգւոյ մը համար: Աղօթեցի որ մարդկային հոգւոյ արժէքին վրայ այնպիսի գաղափար մը ստանամ որ անոր

համար աշխատիլ սորվիմ: Ստացայ այդ գաղափարը, բարեկամներս: Հետեւեալ առաւօտ ճամբայ ելայ: Առաջ ալ շատ անգամ գանուած էի հոն երբ ստուերները կ'երկնային լեռան կողերուն վրայ: Հիմա մտոցած էի անձնական հանգիստս: Սորված էի գործել մարդկային հոգւոյ համար: Ինծի կ'ընկերանային տիկին մը և պզտիկ աղջիկ մը: Մարդն ըստ սովորութեան ըրաւ հայհոյութիւն մը: Չիշտացայ այնչափ որչափ վշտացած էի անոր միւս հայհոյութիւններէն: Տուի անոր կոնք մը մաքուր ջուր, անձեռոց մը և մաքուր պնակներ, ինչպէս առաջ կու տայի և ինք ալ կ'առնէր առանց շնորհակալութիւն յայտնելու: Ընդ հուպ մեր աւանջն հասաւ փոքրիկ աղջկան խնդալու ձայնը: "Ի՞նչ է ատ," ըսաւ մարդը այնպիսի ձայնով մը զոր երբեք լսած չէի անկէ: "Դուրսի պզտիկ աղջիկն է," ըսի: "Մէյրը ներս կը բերէք. կ'ուզեմ անգամ մ'ալ պզտիկ աղջիկ տեսնել," ըսաւ: Ներս կանչեցի աղջիկը: Խեղճը վախցաւ հիւանդէն: Վերջապէս ծռեցաւ անոր վրայ և անոյ ձայնով մը "Ծագիկ մը կ'ուզե՞ս" ըսաւ ցուցնելով քանի մը փոքրիկ ծագիկներ զոր իր ձեռքով ժողված էր: Մարդն երկնցուց իր մեծ ոսկրուտ ձեռքը և դրաւ պզտիկ աղջկան քնքոյ ձեռքին վրայ, և արտասուալից աչքով ըսաւ, "Ատեն մը ես պզտիկ աղջիկ մը ունէի և մեռաւ: Անկէ ետքը ամէն մարդ ատեցի: Կարծեմ թէ աղէկ մարդ մը կ'ըլլայի եթէ ան չմեռնէր": "Քեզի հարցուցի թէ մայր ունի՞ս, կ'ին ունի՞ս, և դուն հայհոյեցիր զանոնք": "Այո," ըսաւ: Ըսի անոր, "Կ'ուզէի՞ր որ պզտիկ աղջիկը մեծնար, քեզի պէս ըլլար: Այդպէս կրնար ըլլալ եթէ ապրէր": Պատասխանեց, "Ո՛վ Աստուած: Երբեք ատոր վրայ չէի խորհած: Ուրախ եմ որ մեռաւ": Ըսի անոր, "Դուն կը սիրէիր պզտիկ աղջիկդ. նա հիմա քեզի կը սպասէ իր փոքրիկ ձեռքով քեզի նշան կ'ընէ, և դուն կրնաս զանի տեսնել Յիսուս ֆրիստոսի օգնութեամբ": "Ի՞նչ կ'ը-













